ԱՍՏՎԱԾ ՍԵՐ Է

Հարությունից անմիջապես հետո Հիսուսը շրջեց երկրի վրա: Մի շարք պատվիրաններ տվեց իր աշակերտներին: Mary Magdalene, Mary The Mother Of James, Salome, And Joanna, Peter, The Disciples - Thomas Absent, All Of The Disciples, Seven Disciples At The Sea Of Galilee, A Mountain In Galilee, Over Five Hundred People, James, Saul.

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 21:15-19

15 *Երբ ճաշեցին, Հիսուսը Սիմոն Պետրոսին ասաց. Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, **«սիրո՞ւմ «agapaō»** ես ինձ ավելի, քան դրանք**»**: Պետրոսը նրան ասաց. Այո՛, Տե՛ր, դու գիտես, որ ես քեզ **«սիրում եմ phileō»**: Նրան ասաց. Արածեցրո՛ւ իմ գառներին: 16 Երկրորդ անգամ նրան հարցրեց. Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, **«սիրո՞ւմ agapaō»** ինձ: Պետրոսը նրան պատասխանեց. Այո՛, Տե՛ր, դու գիտես, որ ես քեզ **«սիրում եմ phileō»**: Նրան ասաց. Արածեցրո՛ւ իմ ոչխարներին: 17 Երրորդ անգամ հարցրեց նրան. Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, **«սիրո՞ւմ ես phileō»** ինձ: Պետրոսը տրտմեց, որ երրորդ անգամ հարցրեց իրեն՝ **«սիրո՞ւմ ես phileō»** ինձ: Եվ պատասխանեց նրան. Տե՛ր, դու ամեն ինչ գիտես. դու գիտես, որ ես քեզ **«սիրո՞ւմ եմ phileō»**: Հիսուսն ասաց նրան. Արածեցրո՛ւ իմ ոչխարներին: 18 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ. երբ դու երիտասարդ էիր, ինքդ էիր գոտիդ կապում և գնում էիր, ուր որ կամենայիր. բայց երբ ծերանաս, ձեռքերդ կբարձրացնես, և ուրիշը գոտիդ կկապի ու քեզ կտանի այնտեղ, ուր որ չես կամենա**»**: 19 Այս ասաց՝ ցույց տալով, թե ինչպիսի՛ մահով նա պիտի փառավորի Աստծուն: Այս ասելուց հետո ասաց նրան. Արի՛ իմ հետևից:*

- **ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՍԵՐ ԲԱՌԸ ՆՇՎԱԾ Է ԾՆՆԴՈՑ 22:2**

  *Աստված ասաց. «Վերցրո՛ւ քո **սիրած** միակ որդուն՝ Իսահակին, գնա՛ Մորիայի երկիրը և ողջակեզ արա նրան այն սարերից մեկի վրա, որ քեզ կասեմ»: Ծննդոց 22:2*

- **ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՍԵՐ ԲԱՌԸ ՆՇՎԱԾ Է ՀՈՎ 3:16**

  *Աստված այնքան **սիրեց** աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա: Հովհաննես 3:16*

I. ԱՍՏՎԱԾ ՍԵՐ Է: GOD IS LOVE.

Եվ մենք ճանաչեցինք ու հավատացինք այն սիրուն, որ Աստված ունի մեր նկատմամբ: Աստված սեր է. ով սիրո մեջ է ապրում, Աստծու մեջ է ապրում, Աստված էլ՝ նրա մեջ: Ա Հովհաննես 4:16

*Սրա մեջ է սերը. **ոչ թե մենք** սիրեցինք Աստծուն, **այլ նա մեզ սիրեց** և իր Որդուն ուղարկեց մեր մեղքերի քավության համար: Ա Հովհաննես 4:10*

"Մենք սիրում ենք նրան, որովհետև նախ նա սիրեց մեզ:" Ա Հովհաննես 4:19

- **ՕՐԻՆԱԿ: ԻՆՉՊԵՍ ԱՍՏՎԱԾ ՄԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ՍԵՐԸ ՀԱՅՏՆԵՑ.**

  Երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ:" Հռոմեացիներին 5:8

- **ՕՐԻՆԱԿ: ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ, ԲԱՅՑ ՀԻՍՈՒՍԻՆ ԱՎԵԼԻ... ՎՍՏԱՀԵԼ, ԳՑՎԵԼ ՁԵՌՔԵՐԻՍ ՄԵՋ:**

  *15 **«Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ ավելի, քան դրանք»**:*

II. ՍԻՐՈ ՄԵՋ ՎԱԽ ՉԿԱ. THERE IS NO FEAR IN LOVE.

18 *Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ. երբ դու երիտասարդ էիր, ինքդ էիր գոտիդ կապում և գնում էիր, ուր որ կամենայիր. **բայց երբ ծերանաս,** ձեռքերդ կբարձրացնես, և ուրիշը գոտիդ կկապի ու քեզ կտանի այնտեղ, ուր որ չես կամենա**»**: 19 Այս ասաց՝ ցույց տալով, թե ինչպիսի՛ մահով նա պիտի փառավորի Աստծուն:*

*16 Եվ մենք ճանաչեցինք ու հավատացինք այն սիրուն, որ Աստված ունի մեր նկատմամբ: Աստված սեր է. ով սիրո մեջ է ապրում, Աստծու մեջ է ապրում, Աստված էլ՝ նրա մեջ: 17 **Սերը կատարյալ է մեր մեջ նրանով,** որ դատաստանի օրը համարձակություն ունենանք, որովհետև ինչպես նա է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում:*

- **ԻՆՉՈՒ ՕՐԻՆԱԿ: ՍԵՐԸ ԿԱՏԱՐՅԱԼ Է ՄԵՐ ՄԵՋ ՆՐԱՆՈՎ... ԿԱՏԱՐՅԱԼ ՍԵՐ ՄԻ ՓՆՏՐԵՔ ԱՇԽԱՐՀՈՒՄ:**

  *18 **Սիրո մեջ «վախ phobos» չկա.** կատարյալ սերը հեռացնում է վախը, որովհետև վախի մեջ տանջանք կա: Եվ ով վախենում է, սիրո մեջ կատարյալ չէ: Ա Հովհաննես 4:16-18*

- **THE RECOVERYVILLAGE.COM — 420 COMPLETE LIST OF PHOBIAS**

  ➡ **ԴԵ ԵԿԵՔ ՀԻՄԱ ՎԱԽԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆԵՆՔ:**

  - ✓ **ACROPHOBIA – FEAR OF HEIGHTS**
  - ✓ **HYDROPHOBIA – FEAR OF WATER**
  - ✓ **OPHIDIOPHOBIA – FEAR OF SNAKES**
  - ✓ **AUTOPHOBIA – FEAR OF BEING ALONE**
  - ✓ **AEROPHOBIA – FEAR OF FLYING**
  - ✓ **PATHOPHOBIA – FEAR OF DISEASE**
  - ✓ **ANDROPHOBIA – FEAR OF MEN**
  - ✓ **CHIROPHOBIA – FEAR OF HANDS**
  - ✓ **CHIRAPTOPHOBIA – FEAR OF BEING TOUCHED**
  - ✓ **GYNOPHOBIA – FEAR OF WOMEN**

Այս աշխարհի կապված:
Արդ Քրիստոսի սիրուց մեզ ո՞վ կբաժանի. տառապա՞նքը, նեղությո՞ւնը, հալածա՞նքը, սո՞վը, մերկությո՞ւնը, վտանգը, սո՞ւրը:" Հռոմեացիներին 8:35

Հանդերձյալ աշխարհի կապված:
Որովհետև հաստատ գիտեմ, որ ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ զորությունները, ո՛չ ներկայիս և ո՛չ գալիք բաները, ո՛չ բարձրությունը, ո՛չ խորությունը, ո՛չ էլ ստեղծված մի ուրիշ բան չեն կարող մեզ բաժանել Աստծու սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է: Հռոմեացիներին 8:38-39

*15 **«Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ ավելի, քան դրանք»**:*

Օհ՜, ես նոր հասկացա որ իմ ինքնությունը Հիսուսի մեջ է այլ ոչ հորական անվան:

III. ԱԳԱՊԵ ՍԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ Է ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՋՈՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ:

19 *Այս ասելուց հետո ասաց նրան. Արի՛ իմ հետևից:*

*Ով այս աշխարհի բարիքներն ունենա և **իր եղբորը որևէ բանի կարոտ տեսնի** ու իր խիղճը նրա առաջ փակի, Աստծու սերը նրա մեջ ինչպե՞ս կարող է ապրել: Որդյակնե՛ր, խոսքով և լեզվով չսիրենք **«agapaō»**, այլ գործով ու ճշմարտությամբ: Ա Հովհաննես 3:17-18*

Մարդիկ, ովքեր շատ են սիրում, շատ էլ զահաբերում են (պատրաստ են մեծ զոհաբերությունների): People Who love greatly, sacrifice greatly.

"Ես մի փոքրիկ մատիտ եմ Աստծո ձեռքին, ով աշխարհին սիրային նամակ է ուղարկում իմ միջոցով" – Մայր Թերեզա:

*"Եթե մի եղբայր կամ քույր մերկ լինեն կամ օրվա ուտելիքի կարոտ, և ձեզանից մեկն ասի նրանց. **«Գնացե՛ք խաղաղությամբ, տաքացե՛ք ու կշտացե՛ք»**, բայց մարմնին անհրաժեշտ բաները նրանց չտաք, ի՞նչ օգուտ է: Այդպես էլ հավատը. եթե գործեր չունենա, ինքնին մեռած է:" Հակոբոս 2:15-17*

- **ՕՐԻՆԱԿ: COVID-19 STIMULUS CHALLENGE: I NOMINATE…**

  "Եթե քո Տեր Աստծու քեզ տված երկրի քաղաքներից մեկում քո եղբայրներից մեկն աղքատ լինի, ապա քո սիրտը չխստացնես և քո ձեռքը չփակես քո աղքատ եղբոր առջև, այլ անպատճառ ձեռքդ բաց կանես նրա համար և նրա կարիքների բավարար լինելու չափ փոխ կտաս նրան:" Բ ՕՐԵՆՔ 15:7-8

ԱՄՓՈՓՈՒՄ

4 Սէրը «_____» երկայնամիտ է՝ քաղցր է. սէրը չի նախանձվում, չի գոռոզանում, չի հպարտանում: 5 Չէ լրբանում, իրը չէ որոնում, չի գրգռվում, չարը չի մտածում. 6 Անիրաւութեան վերայ չի ուրախանում, բայց ուրախանում է ճշմարտութեան հետ. 7 Ամեն բանի դիմանում է. ամեն բան հաւատում է, ամեն բանի համար յոյս ունի, ամեն բանի համբերում է: 8 Սէրը երբէք չի վերջանա.